

Ո՛ւժ տուր մեզի, ոգեւորե՛ եւ մըղէ՛.
 Դո՛ւ մեզ Աստուած, դո՛ւ Տիրամայր, դե՛հ իջիր
 Պատուանդանեդ եւ ձուլէ մեզ կամփոց մէջ,
 Եւ օրէնքներդոյ գըրէ
 Մեր ճակատին վըրայ արեան գըրերով:
 Քու ժողովուրդդոյ մե՛նք ենք.
 Պիտ՛ ըսպանենք մեր աստուածներն հին եւ նոր
 Եւ աճիւնին վրայ անոնց՝
 Ատտիկէի մեհեանեդ ալ հոյակապ
 Պիտ՛ քու մեհեանըդ կանգնենք
 Պիտ՛ կործանենք ապարանքներ ու բանտեր՝
 Եւ քառանկիւն սալքարերովն իրենց յաղթ
 Պիտի բագինը՛դ կանգնենք:
 Ամէն տարի Մահատօսիդ նեմեսեան
 Ատելութեան ի՛նչ նըլագներ պիտ՛ հընչեն.
 Պիտի զարթնուն ի՛նչ մոռցըլած մեռելներ՝
 Եւ խըմելով արիւնախա՛ռըն գինին,
 Չոր սափորով իրենց շիրմին պիտ՛ դընենք,
 Արեւուն տակ, գոր կարօսցան, ձեռք ձեռքի
 Պիտի պարեն շուրջն արծանիդ՝ յանձնելով
 Իրենց պատանքը հովին:
 Իջիր մե՛ր մէջ, եւ բընակէ լոկ մե՛ր մէջ.
 Օ՛հ, ո՛րքան դու չըքնաղ ես
 Եւ ո՛րքան ալ սարսափելի. աչքերդ այդ
 Արդարաբար կը սպաննեն միշտ, եւ ձեռքերդ
 Աճիւններու մէջ պատրաստ են սերմանել
 Շուշան հունտեր շուշանափայլ կեանքերու.
 Գանկի մը մէջ բոյնն իր դընող տատրակն ես.
 Աղբիւր մ՛ես դու ըՍտիւքսի՛
 Որ կը բըխի գերեզմանէ մը կանանչ:
 Ահա քեզի կը կարկառենք մեր քաղցած